ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ԱՆԴԱՄ Է ՆՇԱՆԱԿՎԵԼ

29.05.2018 14:25

2018 թվականի մայիսի 29-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում անց է կացվել կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության նպատակով ՀՀ Ազգային ժողովի նախագահի կողմից ձևավորվող մրցութային խորհրդի (այսուհետ՝ Մրցութային խորհուրդ) կազմում խորհրդի անդամի թեկնածու առաջադրելու համար հարցազրույց:

2018 թվականի մայիսի 21-ին հայտարարված մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած 7 թեկնածուից ներկայացել է 6-ը:

Հարցազրույցն իրականացնող աշխատանքային խումբն, (Էմիլ Ամիրխանյան, Մանե Կարապետյան և Ծովինար Խաչատրյան) ամփոփելով հարցազրույցի արդյունքները, Մրցութային խորհրդի անդամի թեկնածուի հավակնորդ է ընտրել փաստաբան Մարիամ Ջադոյանին և ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի հաստատմանը:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանի 29.05.2018թ. թիվ 224-Ա որոշմամբ փաստաբան Մարիամ Ջադոյանը (արտոնագիր թիվ 1901) նշանակվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուների ընտրության համար ձևավորված մրցութային խորհրդի անդամ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })